ծեփէ, մնայ զողջ տարին. և թէ ոք պըրտուով 'ի քթոցի օրէն խլէֆ շինէ[1] նման, զերդ կենայ 'ի ծառն և բռով ծեփէ՝ մնայ աղէկ, և ոմանք երկայն հոր փորեն և զնուռն և զայլ մրգերն թաւերով կախեն և 'ի վրայ ծածկեն, որ ոչ գիշութիւն մտնէ՝ և ոչ օդն։ Այլ և թանձր աղջուր արա և զնուռն 'ի ներս մխէ, և յարևն դիր որ ցամքի աղէկ, որ խիստ սմքեցնէ զտերևն՝ երբ կամենաս ուտել եղկ ջուր արա, և 'ի ներքս պահ մի 'ի թրջոց դիր, նա դալարանայ և զերդ նոր դառնայ։ Այլ թէ ոք առնու կաղնի փայտի սղոցուք և քացախով աղէկ մնչէ և ցամաքեցնէ և զնուռն անդ թաղէ, նա աղէկ պահէ։

Մ Ի Թ. — Յողոգս դամոնի որ լաս պահէս։ — Այս զդամոնն, զոր այլազգիքն պարպա էրիկի ասեն, և դիր 'ի կարաս, և յիստակած քաղցր գինի լից 'ի վերայ, և երբ սնկիս[2] կեր, անուշ լինի։ Այլ կերպ. քաղէ զաղուոր հասած դամոնն ձեռօքդ որ չհարուի և լից 'ի նոր կաւէ ամանն և զբերանքն ծեփէ և պահէ, նա շատ դիմանայ։

Մ Լ. — Այսն ամենայն լորային և խեճեպոյին իրաց պահելոյ։ — Ընկի և Ֆստուխի, ընկուզի և այլ այսպիսեացս, պարտ է որ 'ի ծառէն վայր առած ժամանակդ աղ ջրով լուանաս և ցամաքեցնես և ապա պահես. եթէ վրայի կեճեպն հանգիստ չելնէ վրայէն, նա 'ի յերդ թաղէ՝ ինքն ինքեան ելանէ, և կեճեպն հանես յառաջ, ապա թէ աղջրով լուանաս։

Մ Լ Գ. — Այսն ինչ պահելոյ։ — Երբ կամենաս զմուստաուի բերանքն ծեփել, և դու առ զնոր պուտուկ՝ և լից զկանաչ թուզն, 'ի ներքս մխէ զպուտուկ 'ի մուստաուն որ պուտկի բերանն և կարսին հաւասար յիրար գան, և գոցէ զերկուքն և ծեփէ և թող. յորժամ ուզենաս՝ զթուզն թաժայ գտնուս։

1. Ի ֆնոյի օրէն խլէֆ շինէ. ըստ օրինակի կթոյի (սապատի) պատեսցես զնա պրտուով։
2. Մկիս. կամենաս։

Լրվայեան տր Ֆլորիվալ վարժապետ հայերէն լեզուի 'ի Բարիզ։

Տարւոյս սկիզբները (21 յունուարի) մեռաւ Պ. Պօղոս Լամիլ Լրվայեան տր Ֆլորիվալ, հայագէտն և դասատու հայերէն լեզուի 'ի գրատան Բարիզու, 62 տարեկան։ Այսան տարեկան հասակին մէջ մնած էր դիւանագրութեան վարժարանը, որոյ ընթացքը երեք տարուան մէջ կատարելով, յետոյ արևելեան կենդանի լեզուաց ետևէ եղաւ, որով և 1828ին արքունի գրատան հայերէնի վարժապետ դրուեցաւ։ Բոլոր կեանքը հայկական դպրութեան ետևէ եղած է. և Ս. Պ ազարու հայկական ճեմարանին անդամակից գրուած էր։ Հրատարակած գրոց մէջ գլխաւորներն են Թարգմանութիւն Պապոնրեան Մովսէսի Խորենացւոյ, հանդերձ պատմական ծանօթութեամբք. Համառօտութիւն պատմութեան Հայոց. Աստուածաբանութեան Մխիթարայ Գոշի։ Մխիթարեան դիւանաբանութեան վրայ տեղեկութիւն մը. Եղծ աղանդոց Լազարկայ կողբացւոյ։ Նոյնպէս հրատարակած է արևելքի վրայ այլ և այլ տեղեկութիւններ ասիական օրագրին մէջ։ Ասպետական պատիւ ալ ընդունած է 1839ին։

Բարձր ծիհաև մը։

Գերմանիոյ Հակրն քաղաքը գործատուն մը կայ. որոյ ծխանը Գերմանիոյ մէջ գտնուածներէն ամենէն բարձրն է, և աշխարհքիս մէջի եղածներուն ալ բարձրագոյններուն մէկն, երկայնութիւնն հարիւր երեսուն մէտր է։ Այսանի մը տարի առաջ այս ծխանը փոթորկէ մը ծռելով, հմուտ ճարտարապետին մէկը նորէն շտկեց և ուզելով այս յաջողութեանս հանդէս մը ընել՝ անցեալ տարի հոկտեմբերի 29ին տափարակ մը շինել տուաւ ծխահանին գագաթան վրայ և անոր վրայ

ալ տախտըկէ սրահակ մը չորս կողմէն լայն պատուհաններով. և այս կէս սրահ և կէս մը պատշգամբին մէջ հրաւիրեց իր բարեկամները. երբոր գործիքն գչէնքը վեր բարձրացուց, կոչնականները կայծակի արագութեամբ վերացան և նորէն ոտք անվնաս վար իջան, և հրաւէրքն այսպէսով լմնցաւ.

ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Տասներորդ դար:

Ժ. Պատկեր. ամ տեառն 900–999:

Գրիգոր Նարեկացի:

Ա. Աղօթագիրք. Նարեկ*: — Բ. Մեկնութիւն Երգոց Երգոյն*: — Գ. Պատմութիւն սրբոյ խաչին Ապարանից*: — Դ. Ներբող ի Ս. խաչն*: — Ե. Ներբող 'ի Ս. կոյսն*: — Զ. Նոյն վերստին 'ի վերայ գրոց անուան իւրոյ*: — Է. Յիշատակագիր Նամակ առ Ստեփանոս Մոկ*: — Ը. Ներբող 'ի սուրբ Առաքեալսն*: — Թ. Ներբող 'ի սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետ*: — Ժ. Գանձք. Մեղեդիք և տաղք*: — ԺԱ. Խրատք վասն աղօթից և վասն արտասուաց յուսոյ և սիրոյ: (անստոյգ): — ԺԲ. Մեկնութիւն. Ո՛վ է գայ: (անստոյգ): — ԺԳ. Հրահանգ հաւատոյ. (անստոյգ):

Մետասաներորդ դար:

ԺԱ. Պատկեր. ամ տեառն 1000–1099

Յովհաննէս Կոզեռն:

Երկասիրութիւն ինչ 'ի վերայ Տումարական արուեստին, և Թուականաց և շրջանաց. (անյայտ):

Գրիգոր Մագիստրոս:

Ա. Թուղթք առ զանազան անձինս մթին ոճով[1]: — Բ. Ոտանաւորք և պատմութիւնք: — Գ. Տաղաչափութիւն 'ի խնդրոյ Մանուչէի ամիրայի հազար տուն*: — Դ. Ներբողեան 'ի սուրբ խաչն քրիստոսընկալ: — Ե. Բան յաղագս խաչանշան զաւազանին: — Զ. Մեկնութիւն հին քերականութեան: — Է. Շարականն «Զորս ըստ պատկերի» (անստոյգ): — Ը. Թարգմանութիւնք կարծի 'ի սմանէ Թարգմանեալ մատեանն Պղատոնի Տիմէի և փեդոնի տրամաբանութիւնն առձայնեալ Յիշատակին այլ ևս Թարգմանեալ երկասիրութիւնք մատենագրիս անյայտք:

1. Խմբագիրք պատուական օրագրին ԾԻԱԾԱՂի Մոսկուայ ընծայեն 'ի լոյս զմանս 'ի Թղթոցն Գրիգորի Մագիստրոսի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ